




Հաստատում եմ՝
 ԼՂՀ Պաշտպանության նախարար
 զեներալ-լեյտենանտ
 Ս. Հակոբյան
 «13» 2014թ.

Հաստատում եմ՝
 ԼՂՀ կրթության և գիտության
 նախարար
 Ս. Ասրյան
 «12» 2014թ.



Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ԼՂՀ հանրակրթական դպրոցների 11-րդ դասարանի տղաների միջև ԱԿ-74 ինքնաձիգից հրաձգության հանրապետական առաջնության անցկացման

1. Նպատակը և խնդիրները

- Դպրոցականների մեջ սեր դաստիարակել դեպի ռազմական գործի և զենքի նկատմամբ:
- Մասսայականացնել հրաձգությունների կազմակերպումը և անցկացումը:
- Մրցույթների արդյունքներում ի հայտ բերել տաղանդավոր պատանի հրաձիգներին:
- Կատարելագործել և ամրապնդել ՆԶՊ ուսումնական ծրագրի դրույթները:
- Բարձրացնել պաշտպանամասսայական խմբակների արդյունավետությունը:
- Դպրոցականներին նախապատրաստել հայրենիքի պաշտպանությանը:

2. Մրցումների ղեկավարումը և կազմակերպումը

Մրցումների ընդհանուր ղեկավարությունը իրականացնում են ԼՂՀ ԿԳ նախարարությունը և ԼՂՀ Պաշտպանության նախարարությունը, իսկ անմիջական անցկացումը կազմակերպում է երկու նախարարությունների կողմից հաստատված մրցավարական հանձնաժողովը:

3. Մրցումների անցկացման վայրը և ժամկետները

Հրաձգության առաջնությունն անց են կացվում երկու փուլով.
 1-ին փուլ՝ շրջանային /քաղաքային/, 2014թ. մինչև հոկտեմբերի 15-ը:
 Մրցումները անցկացնել կցված շեֆ գորամասերի գորային հրաձգարաններում:
 2-րդ փուլ՝ հանրապետական՝ 2014թ. հոկտեմբերի 20-21-ը «Ասպարեզ» ուսումնական կենտրոնում:

4. Առաջնության մասնակիցները

Հանրապետական առաջնությանը մասնակցում են Ստեփանակերտ քաղաքի և ԼՂՀ շրջանների 11-րդ դասարանի պատանիների 1-ական հավաքական ջոկ: Զոկի կազմը՝ 11 հոգի՝ 10 տղա և 1 գինդել:

5. Մրցումների անցկացման պայմանները և ծրագիրը

Մրցումների ժամանակ մասնակիցների կողմից կատարվում է ԱԿ- 74 ինքնաձիգի գործնական հրաձգություն անշարժ կրծքային ֆիզուր շրջանագծերով /թիրախ N 4/ 0,75x 0,75 մ վահանակի վրա, վահանակը կանգնեցվում է գետնի մակերեսին /առանց լուսավորման/:

Յուրաքանչյուր մասնակից մարտական փամփուշտներով կատարում է 3 կրակից փորձնական և 5-ը ստուգարքային:

Նշանակետի հեռավորությունը՝ 100 մ: Հրաձգության համար նախատեսված ժամանակը՝ անսահմանափակ:

Հրաձգության դրությունը պառկած հենարանից: Կրակը վարվում է մենահատ կրակոցներով:

6. Անվտանգության կանոնները

- Մրցումներին թույլատրվում են մասնակցել անվտանգության կանոնների վերաբերյալ հրահանգավորված մասնակիցներին

- Մրցումների ժամանակ անվտանգության կանոնների խախտման դեպքում, մասնակիցը հեռացվում է մրցումներից:

- Ջինդեկներին՝ մրցումներին մասնակցելու հայտի հետ մեկտեղ ներկայացնել նաև մասնակիցներին անվտանգության կանոնների պահպանման հրահանգավորման ամփոփագիրը /հավելված 1/:

7. Առաջնության որոշման կարգը

Մրցումների արդյունքում որոշվում է թիմային և անհատական առաջնությունը: Թիմային՝ որոշվում է ջոկի յուրաքանչյուր անդամի հավաքած միավորների գումարով՝ 5 ստուգարքային կրակոցների արդյունքով:

Անհատական առաջնության զբաղեցրած տեղերը որոշվում է հրաձիգների առավելագույն միավորների քանակով՝ ստուգարքային կրակոցների արդյունքով:

8. Անցկացման ժամկետները /ժամանակացույց/

1-ին օր 20.10.2014թ.

- ժամանման օրը
- Հայտերի ներկայացում

2-րդ օր 21.10.2014թ.

- Մասնակիցների տեղավորում
- Մասնակիցների ներկայանալը «Ասպարեզ» ուսումնական կենտրոն մինչև ժամը 9.⁴⁰
- Մրցումների հանդիսավոր բացում 10.⁰⁰
- Մրցումների անցկացում 10.³⁰ – 13.⁰⁰
- Արդյունքների ամփոփում, պարգևատրում և մրցումների փակում 13.²⁰ – 13.³⁰

9. Պարգևատրությունը

Ընդհանուր թիմային և անհատական հաշվարկներում մրցանակային տեղեր զբաղեցրած ջոկերը և մասնակիցները պարգևատրվում են ԼՂՀ ԿԳ նախարարության ու ԼՂՀ ՊՆ համապատասխան դիպլոմներով, պատվոգրերով և արժեքավոր նվերներով:

10. Ֆինանսական ծախսերը

ԱԿ-74 ինքնաձիգից հրաձգության հանրապետական առաջնության կազմակերպման և անցկացման բոլոր ծախսերը /ճանապարհածախս, գիշերավարձ, մրցավարների և սպասարկող անձնակազմի վարձատրություն/ հոգում է ԼՂՀ ԿԳ նախարարությունը:

11. Մասնակցության հայտերը

Առաջնության մասնակիցների անվանական հայտերը /հավելված 2/ բժշկի պարտադիր ստորագրությամբ ներկայացվում է ԼՂՀ Պ և ԿԳ նախարարությունների կողմից հաստատված հանձնախմբին՝ ժամանման օրը՝ հոկտեմբերի 20-ին:

Սույն կանոնակարգը հանդիսանում է պաշտոնական հրավերք առաջնությանը մասնակցելու համար:

ԼՂՀ ԿԳՆ ՌՀԴ և ՀԿՀԿ բաժնի վարիչ՝  Վ. Գրիգորյան

ԼՂՀ ՊՆ ՌՀԴ և ՀԿՀԿ բաժնի պետ՝  Բ. Մուրադյան

Ամփոփագիր

ԱԿ-74 ինքնաձիգից հանրապետական առաջնության _____ շրջանի
մասնակիցների անվտանգության կանոնների հրահանգավորման:

Հ/Հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Հրահանգավորվողի ստորագրությունը	Հրահանգավորման ամսաթիվը	Ծանոթություն
1				
2				
3				
4				
5				
6				
7				
8				
9				
10				

Զինդեկ

_____ (Ազգանուն, անուն)